Հանցագործության օբյեկտը

Հանցագործության օբյեկտի հասկացությունը

Հանցագործության օբյեկտը քրեական իրավունքի կողմից պաշտպանվող այն հասարակական հարաբերություններն են, որոնք խախտվում են հանցավոր ներգործությամբ

Հանցագործության օբյեկտ չեն կարող հանդիսանալ

նյութական աշխարհի իրերը, առարկաները, արժեքները, մարդիկ

Հասարակական հարաբերությունները բաղկացած են 3 տարրերից՝

- հասարակական հարաբերության **օբյեկտը,** այսինքն՝ այն **իրը, առարկան կամ արժեքը**, որի կապակցությամբ ծավալվում է հասարակական հարաբերությունը
- հասարակական հարաբերության սուբյեկտների **գործունեությունը**
- հասարակական հարաբերության **սուբյեկտները** կամ կողմերը

Հանցագործության առարկան

այն նյութական իրերը, առարկաները, արժեքները, մարդիկ և նրանց գործունեությունն է, որոնց վրա ներգործելով հանցավորը խախտում է հասարակական հարաբերությունը և վնասում այն

Հանցագործության օբյեկտը բնութագրվում է

Հիմնական հատկանիշներով

հասարակական հարաբերություններն են

Ֆակուլտատիվ հատկանիշներով

առարկան, սրա պաշտպանվածության աստիճանը, արժեքը, որոշ հանցագործությունների դեպքում՝ սրուժված

Հանցագործության օբյեկտը կարևոր նշանակություն ունի

- օբյեկը հանցակազմի տարրերից մեկն է, որի բացակայությունը բացառում է քրեական պատասխանատվությունը,
- օժանդակում է բացահայտել հանցանքի սոցիալ-քաղաքական և իրավական էություն,
- հանդիսանում է ՀՀ քր. օր.-ի Հատուկ մասի համակարգի կառուցման չափանիշ,
- բացահայտում է հանցանքի հանրորեն վտանգավորության բնույթը,
- էական դեր ունի հանցանքի որակման գործընթացում,
- էական դեր ունի հանցանքները միմյանցից տարբերելու գործում:

Հանցագործության օբյեկտի տեսակները

Իրավաբանական գրականության մեջ ընդունված է հանցագործության օբյեկտը դասակարգել 4 տեսակի

Ընդհանուր օբյեկտ

այն հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք առնված են քրեական իրավունքի պաշտպանության տակ և խախտվում են ընդհանրապես հանցագործությունների կատարմամբ

Տեսակային օբյեկտ

որոշակի խումբ հասարակական հարաբերությունների ամբող ջությունն է, որոնք խախտվում են Հատուկ մասի բաժնում ընդգրկված հանցագործությունների կատարմամբ

Սեռային օբյեկտ

համասեռ հասարակական հարաբերությունների ամբողջությունն է, որոնք խախտվում են Հատուկ մասի գլխում ընդգրկված հանցագործությունների կատարմամբ

Անմիջապես օբյեկտ

այն կոնկրետ հասարակական հարաբերությունն է, որը վնասվում է կոնկրետ հանցագործության կատարմամբ

Երկօբյեկտ հանցագործություններ

որոնք միաժամանակ վնաս են հասցնում կամ վտանգի տակ են դնում մեկից ավելի օբյեկտներ

երկօբյեկտ հանցագործություններ

հիմնական անմիջական օբյեկտ

այն հասարակական հարաբերությունն է, որը միշտ տվյալ հանցագործության կատարմամբ վնասվում կամ վտանգի տակ է դրվում, և օբյեկտին վնաս հասցնելը հանդիսանում է տվյալ հանցագործության սոցիալական էությունը

լրացուցիչ անմիջական օբյեկտ

Պարտադիր լրացուցիչ օբյեկտ

այն հասարակական հարաբերությունն է, որը տվյալ հանցագործության կատարմամբ հիմնական անմիջական օբյեկտի հետ միաժամանակ միշտ վնասվում կամ վտանգի տակ է դրվում

Ֆակուլտատիվ լրացուցիչ օբյեկտ

այն հասարակական հարաբերությունն է, որը միշտ չէ, որ հիմնական օբյեկտի հետ միասին վնասվում կամ վտանգի տակ է դրվում

Երկու կանոն, որոնց հիման վրա կատարվում է ֆակուլտատիվ լրացուցիչ օբյեկտով հանցագործության որակումը

Եթե ֆակուլտատիվ լրացուցիչ օբյեկտին վնաս պատճառելու համար նախատեսված սանկցիան հավասար կամ **ավելի խիստ է**, քան հիմնական օբյեկտին վնաս պատճառելու համար նախատեսված սանկցիան, ապա արարքը որակվում է **հանցագործությունների համակցությամբ**, հակառակ դեպքում՝ **միայն հիմնական** օբյեկտին վնաս պատճառելը նախատեսող հոդվածով: Այս մոտեցումն ընկած է ՀՀ քր. օր.-ի 52-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքում համաձայն որի եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձն առանձին ենթարկվում է քրեական պատասխանատվության միայն այն դեպքում, երբ այդ հանցագործության համար ՀՀ քր. օր.-ով հավասար կամ ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցակազմի համար, որի բաղկացուցիչ մասն է տվյալ հանցանքը:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ